Հաստատում եմ

Ստեփանավանի N 2 հիմն. դպր. տնօրեն՝ Ս. Նազարյան

# 2022-2023 ուստարի

# Ստեփանավանի N 2 հիմնական դպրոցի տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ Ռ. Սարգսյանի տարեկան աշխատանքային պլան

# Տարեսկզբի կազմակերպչական աշխատանքներ

| N | Աշխատանքի բովանդակություն | Կատարման ժամկետ | Կատարող |
|---|---|---|---|
| 1. | Կորոնավիրուսային հիվանդության կանխարգելելու նպատակով ուսումնակրթական գործընթացը դպրոցում իրականացնել տրամադրված ուղեցույցով սահմանված կանոնների պահպանությամբ ,առաջնորդվելով Առողջապահության նախարարության 2020թ. սեպտեմբերի 18-ի N24-Ն հրամանով: | օգոստոս-սեպտեմբեր | տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ, դասղեկներ |
| 2. | | սեպտեմբեր | տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ, բուժքույր |
| 3. | Կազմակերպել և իրականացնել դպրոցի բուժքրոջ ներգրավմամբ դպրոցի աշխատակիցների համար դասընթացներ: | սեպտեմբեր | տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ, դասղեկներ |
| 4. | Դպրոցի բոլոր ուսումնադաստիարակչական աշխատանքները կազմակերպել առաջնորդվելով Առողջապահության նախարարության 2020թ. սեպտեմբերի 18-ի N24-Ն հրամանով: | սեպտեմբեր | տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ |
| 5. | Աշխատանքները դպրոցում կազմակերպել 5-օրյա աշխատանքային ռեժիմով: | սեպտեմբեր | տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ |
| 6. | Կազմակերպել դպրոցի միկրոավտոբուսի աշխատանքային ժամերը և երթուղին: | սեպտեմբեր | տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ |
| 7. | Կազմակերպել դասագրքերի բաշխման գրաֆիկը ըստ դասարանների : | սեպտեմբեր | տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ, գրադարանավար, դասղեկներ |
| 8. | Սահմանել ուսուցիչների հերթապահության գրաֆիկ: | սեպտեմբեր | տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ |

| | | | |
|---|---|---|---|
| 9. | Ծանոթացնել դասղեկներին և ծնողներին ԿԳՄՍՆ ուղեցույցին կորոնավիրուսային հիվանդության պայմաններում ուսումնական հաստատության աշխատանքները կազմակերպելու մասին: | սեպտեմբեր | տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ, դասղեկներ |
| 10. | Դասարանների կոմպլեկտավորում և դասասենյակների բաշխում: | սեպտեմբեր | տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ |
| 11. | Նշանակել դասղեկներին , ղեկավարել դասղեկների գործունեությունը, դասղեկների պլանները ներկայացնել հաստատման: | սեպտեմբեր | տնօրեն, տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ |

## Կրթադաստիարակչական աշխատանքների հիմնական ուղղությունները

| N | Աշխատանքի բովանդակություն | Կատարման ժամկետ | Կատարող |
|---|---|---|---|
| 1. | Բոլոր աշխատանքների բովանդակությունը նպատակաուղղել աշակերտների դաստիարակությանը, պատշաճ վարքի և վարվելակերպի ձևավորմանը, անձի բազմակողմանի և ներդաշնակ զարգացմանը: | ուստարվա ընթացքում | տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ |
| 2. | Բարենպաստ պայմաններ ստեղծել սովորողների մտավոր, հոգևոր և ֆիզիկական ընդունակությունների զարգացման համար: | ուստարվա ընթացքում | տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ |
| 3. | Նպաստել սովորողների աշխարհաճանաչման զարգացմանը, ազգային և համաշխարհային | ուստարվա ընթացքում | տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ, դասղեկներ |

| | | | |
|---|---|---|---|
| | մշակույթի արժեքներին ծանոթանալուն, ժամանակակից աշխարհի մարտահրավերներին պատրաստ անհատի ձևավորմանը: | | |
| 4. | Ապահովել դպրոցի տեղեկատվական անկյունների, <<Ճառագայթ>> պատի թերթի և այլ պաստառների գործունեությունը: | ուստարվա ընթացքում | տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ, դասղեկներ |
| 5. | Կազմակերպել դպրոցական ինքնավարության աշխատանքները: | ուստարվա ընթացքում | տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ, ԴԱԿ |
| 6. | Ապահովել դպրոցի և ծնողի ակտիվ համագործակցությունը, դպրոցի ծնողխորհրդի աշխատանքները: | ուստարվա ընթացքում | տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ, դասղեկներ |
| 7. | Հեռավար ուսուցում կազմակերպելու հմտություններ ունեցող ակտիվ ուսուցիչների փորձի փոխանակում: | հոկտեմբեր | տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ, ուսուցիչներ |
| 8. | Քաղաքացիական ակտիվ դիրքորոշման պատասխանատվության, արժանապատվության ձևավորում, հարգանք երկրի մշակույթի և պատմության հանդեպ: | ուստարվա ընթացքում | տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ, դասղեկներ և ուսուցիչներ |
| 9. | Դպրոցի և յուրաքանչյուր դասարանի աշխատանքները ուղղել ՀՀ պատմության հոգևոր և ազգային տոների, հիշարժան և հիշատակի օրերի, ազգային հերոսների կյանքի և գործունեության ուսումնասիրմանը և ճանաչմանը: | ուստարվա ընթացքում | տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ, դասղեկներ և ուսուցիչներ |
| 10. | Կազմակերպել միջոցառումներ, զրույցներ, դասղեկական ժամեր/հեռավար/ նվիրված ՀՀ ազգային հերոսների, ՀՀ և համաշխարհային հռչակավոր գիտնականների, երաժիշտների, նկարիչների և այլ մշակութային գործիչների կյանքին: | ուստարվա ընթացքում | տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ, դասղեկներ և ուսուցիչներ |

| | | | |
|---|---|---|---|
| 11. | Համատեղ աշխատանք առարկայական մասնախմբերի հետ. դպրոցի ուսումնական և դաստիարակչական համատեղ ներդաշնակ աշխատանքը նպատակուղղել բազմակողմանի զարգացած անձ դաստիարակելուն: | ուստարվա ընթացքում | տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ, մ/մ նախագահներ |
| 12. | Նպաստել աշակերտների ակտիվ մասնակցությանը դպրոցական, մարզային և հանրապետական օլիմպիադաներին: | ուստարվա ընթացքում | տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ, մ/մ նախագահներ, դասղեկներ, ուսուցիչներ |
| 13. | Նպաստել աշակերտների մասնակցությանը տարբեր կրթական ծրագրերի և մրցույթների. <<Մեղու>>, <<Ռուսական արջուկ>>, <<Կենգուրու>> և այլն: | ուստարվա ընթացքում | տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ, մ/մ նախագահներ, դասղեկներ, ուսուցիչներ |
| 14. | Մշակույթ կրող, ստեղծագործական ակտիվություն ունեցող, իր հայրենիքի և համաշխարհային քաղաքականության արժեքները ճանաչող, համամարդկային արժեքները հարգող անձի ձևավորում.<br>ռադիոհաղորդումներ<br>դասղեկական ժամեր<br>այցելություններ մշակութային կենտրոններ<br>այլ | ուստարվա ընթացքում | տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ, մ/մ նախագահներ, դասղեկներ, ուսուցիչներ |
| 15. | Իրավական գիտակցության և հանդուրժողականության խթանում, երկրի իրավական նվաճումների մասին տեղեկացված քաղաքացու դաստիարակում: Իր իրավունքները և պարտականությունները իմացող օրինապահ, ազնիվ, մարդասեր, պատասխանատվությամբ օժտված, նախաձեռնող և հասարակական գործում դիրքորոշում ունեցող անձի ձևավորում: | ուստարվա ընթացքում | տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ, մ/մ նախագահներ, դասղեկներ, ուսուցիչներ<br><br>տնօրենի ՄԿԱ |

| | | | |
|---|---|---|---|
| 16. | Ապահովել դպրոցի ԱԽ ընտրությունները, կազմակերպել ինքնավարության աշխատանքները: | սեպտեմբեր | գծով տեղակալ, ԴԱԿ |
| 17. | Անցկացնել աշխատանքներ դպրոցի ներքին կանոնադրությանը ծանոթանալու և ներքին կարգապահական կանոնները կատարելու նպատակով: | սեպտեմբեր | դասղեկներ |
| 18. | Երեխայի իրավունքների հռչակագրի քննարկում: Հանդուրժողականության հռչակագրի քննարկում: | նոյեմբեր | հաս. գիտ. մ/մ<br>հաս. գիտ. մ/մ |
| 16. | Ֆիզիկական զարգացմանն ուղղված պայմանների ստեղծում, վնասակար սովորությունների հանդեպ բացասական վերաբերմունքի ձևավորում, առողջ ապրելակերպի, անվտանգ կենսագործունեության կանոնները ճանաչող և դրանք կյանքում կիրառող անձի ձևավորում: | հունվար | տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ |
| 17. | Աշխատանքային հմտությունների և կառուցողական վերաբերմունքի խթանում, մասնագիտական կողմնորոշում, բնության հանդեպ հոգատար վերաբերմունքի ձևավորում: | ուստարվա ընթացքում | տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ, դասղեկներ, ուսուցիչներ |
| 18. | Կազմակերպել դասարանային և համադպրոցական շաբաթօրյակներ՝ դասասենյակների և դպրոցի շրջակա տարածքը մաքուր պահելու նպատակով: | ուստարվա ընթացքում | տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ, դասղեկներ, ուսուցիչներ |

| | | | |
|---|---|---|---|
| | Ձեռքի աշխատանքների ցուցահանդես: Ծանոթացնել երեխաներին բնապահպանական հիմնախնդիրներին: | | |

## Աշխատանք դասղեկների հետ

| | | | |
|---|---|---|---|
| 19. | 1.Դասղեկների աշխատանքային պլանների մշակման վերհսկում և ներկայացում հաստատման: 2.Դասղեկական ժամերի մշտադիտում; 3.Խորհրդակցություններ դասղեկների հետ հետևյալ թեմաներով - աշխատանքի պլանավորում - աշխատանք ծնողների և ծնողխորհրդի հետ - ծնողական ժողովների նախապատրաստում և կազմակերպում - աշխատանք դժվար դաստիարակվող աշակերտների հետ - աշխատանք սոցիալապես անապահով, անբարենպաստ ընտանիքների երեխաների հետ - աշխատանք հատուկ կարողություններով օժտված երեխաների հետ - աշխատանք ուսուցման հատուկ կարիք ունեցող երեխաների հետ - դասղեկների աշխատանքային փորձի փոխանակում - միջոցառումների, արշավների, էքսկուրսիաների, շարաթօրյակների, մրցույթների կազմակերպում - բաց դասղեկական ժամերի կազմակերպում | ուստարվա ընթացքում | տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ, դասղեկներ |

| | | | |
|---|---|---|---|
| | - դասալսումներ՝ դասի դաստիարակչական կողմը գնահատելու նպատակով | | |

## Աշխատանք ծնողների հետ

| | | | |
|---|---|---|---|
| 20. | Աշխատանքի խնդիրները՝ ապահովել դպրոցի և ծնողի ակտիվ համագործակցություն 3 հիմնական ուղղություններով. 1.Ծնողի հոգեբանամանկավարժական տեղեկատվություն՝ - ծնողական ժողովներ - հանդիպում ծնողների հետ 2.Ծնողի մասնակցություն ուսումնադաստիարակչական գործընթացին՝ - մասնակցություն բաց դասերին - մասնակցություն արտադասարանական միջոցառումներին - ծնողական հսկողության սահմանում դպրոցում և դասարաններում - մասնակցություն դասարանի և դպրոցի կյանքին 3.Ծնողների մասնակցություն դասարանների կառավարմանը՝ - մասնակցություն դպրոցի կազմակերպչական աշխատանքներին - ծնողների մասնակցություն դպրոցի և դասարանի ծնողական խորհրդի աշխատանքներին - ապահովել ծնող-դպրոց սերտ | ուստարվա ընթացքում | տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ, դպրոցի ծնողական խորհուրդ |

| | | | |
|---|---|---|---|
| | կապը | | |

## Աշխատանք անցանկալի վարք ցուցաբերող երեխաների, հատուկ կարիքներով, սոցիալապես անբարենպաստ ընտանիքների երեխաների հետ

| | | | |
|---|---|---|---|
| 21. | 1.Աշխատանք տանել սովորողների վարքի կուլտուրայի, վարվեցողության նորմերի և կանոնների պահպանման ուղղությամբ:<br>2.Հսկողություն իրականացնել սովորողների առաջադիմության և վարքի նկատմամբ:<br>3.Միջոցներ ձեռնարկել սոցիալապես անապահով երեխաներին օգնություն ցույց տալու համար:<br>4.Սոցիալապես անապահով երեխաների բացահայտում և հաշվառում:<br>5.Անցանկալի վարք ցուցաբերող երեխաների հաշվառում:<br>6.Անցանկալի վարքի պատճառների ուսումնասիրություն և համապատասխան աշխատանքի պլանավորում:<br>7.Ապահովել համագործակցություն ոստիկանության ԱԳ բաժանմունքի հետ: | ուստարվա ընթացքում | տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ, դասղեկներ |

## Աշխատանք ներառական կրթության աջակցման խմբի հետ

| | | | |
|---|---|---|---|
| 22. | Պաշտոնական պարտականություններ՝ մասնակցել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների՝ կրթություն ստանալու իրավունքի իրականացմանը:<br>1.Ներառական կրթության աջակցման խմբի տարեկան պլանի քննարկում<br>2.Կատարված աշխատանքի վերահսկողություն, վերլուծություն, քննարկում, գնահատում:<br>3.Ներկայացնել սովորողին տրամադրվող աջակցող ծառայությունների ժամանակացույցը և տրամադրել սովորողների ծնողներին | ուստարվա ընթացքում | տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ, դպրոցի հոգեբան , ուսուցչի օգնականներ |

## Աշխատանք գրադարանավարի հետ

| | | | |
|---|---|---|---|
| 23. | 1.Համատեղ աշխատանք դասագրքերի բաշխման գործում<br>2.Համատեղ միջոցառումների, դպրոցական ցուցահանդեսների պլանավորում<br>3.Համատեղ աշխատանք սոց. անապահով և/կամ ծնողազուրկ աշակերտներին զեղչով կամ անվճար դասագրքեր տրամադրելու համար | ուստարվա ընթացքում | տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ, գրադարանավար |

## Աշխատանք դաստիարակչական աշխատանքների կազմակերպչի հետ

| | | | |
|---|---|---|---|
| 24. | 1.Կազմակերպել և իրականացնել բուժքրոջ հետ դպրոցի աշխատողների համար :<br>2. Համակարգել դպրոցի աշակերտների մուտքը դպրոց (մուտք , ջերմաչափում)<br>3.Կազմակերպչի տարեկան աշխատանքային պլանի համատեղ մշակում և ներկայացում հաստատման<br>4.Աշակերտական խորհրդի համատեղ պլանավորում և վերահսկում<br>5.Արտադասարանական և համադպրոցական միջոցառումների կազմակերպում | ուստարվա ընթացքում | տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ, ԴԱԿ |

## Հետազոտական գործունեություն, ներդպրոցական վերահսկում

| | | | |
|---|---|---|---|
| 25. | Աշխատանքի խնդիրները՝ վերահսկել ուսումնադաստիարակչական աշխատանքերի կազմակերպումը, ուղղորդել և կարգավորել սովորողների դաստիարակությանը և ստեղծագործական զարգացմանը ուղղված մանկավարժական կոլեկտիվի գործունեությունը: Ներդպրոցական վերահսկողության արդյունքները պետք է հիմք հանդիսանան բոլոր որոշումները ընդունելու համար: Ներդպրոցական վերահսկման բաղադրիչներն են՝<br>1.Դաստիարակչական գործընթացը՝<br>- սովորողների դաստիարակության մակարդակի վերահսկում; | ուստարվա ընթացքում | տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ դասղեկներ, փոխտնօրեններ |

| | | | |
|---|---|---|---|
| | - դասղեկի աշխատանքի որակի վերահսկում;<br>- դաստիարակության գործանթացում ծնողների մասնակցության վերահսկում;<br>- դպրոցի միջոցառումների որակի վերահսկում;<br>- աշակերտների առողջության /ֆիզիկական/ վիճակի վերահսկում;<br>- սոց. անբարենպաստ ընտանիքների, դժվար դաստիարակվող երեխաների հետ տարվող աշխատանքների վերահսկում;<br>Հետնել սովորողների հաճախումներին, քննարկել սովորողների հաճախումների հարցը տնօրենության հետ:<br>2.Մեթոդական աշխատանք<br>- դասղեկների մեթոդական պատրաստվածության վերահսկում;<br>- մանկավարժական փորձի փոխանակում;<br>3.Հոգեբանական մթնոլորտի վորահսկում<br>- աշակերտների և ուսուցիչների հոգեբանական բարեկցության կամ անբարեկցության աստիճանի հստակեցման և բարելավմանն ուղղված գործունեություն: | | |
| 26. | Տարեվերջյան ուսումնադաստիարակչական աշխատանքների հաշվետվություն | Հունիս | տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ |